

ՊԱՐԱՔ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՉ ԿՈՒՂՂԵ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՄԻ

ՌՈՅԹԸՐԶ, 25 (ՔՐԻԱԹ ՇՄՈՆԱ).- Իսրայելի խորհրդարանը (Կնեսետ) երեկ ժողով մը գումարեց հիսիսային Իսրայելի Քրիսթ Շմոնա քաղաքին մէջ. որ ամէնէն աւելի թիրախ դարձած է դիմադրութեան արձակած «Զափուշա»-ներուն: Քնեսետին առջեւ խօսք անդերով, Պարաք կոչ ուղղեց Լիբանանի, որ իսրայելեան ուժերու հետագման արիւթը օգտագործելով, խաղաղութիւն հաստատէ Իսրայելի հետ:

Իր խօսքը ուղղակի ուղղելով նախագահ Լահուտի, Պարաք ըսաւ. «Կը դիմեմ քեզի նախագահ Էմիլ Լահուտ, որ Իսրայել իր ձեռքը կերկարէ դէպի խաղաղութիւն» միացեալ եւ աւելի լաւ ապագայի տեսլիքով մեր երկու ժողովուրդներու պաւակներուն համար: Օգտագործեմք այս արիւթը եւ խօսիմք խաղաղութեան մասին»:

ԱՊԱԳԱՅԻՆ ԱԶՏԱԳՐՈՒՄԸ

22 տարին երէկ վեր գերեզմարուած լիբանանեան հողը ապատագրուած է շնորհիւ ժողովուրդին անվատ դիմադրութեան եւ անձնուէր մարտիկներու պահպանութեան: Մայր հայրենիքն է հարապատ ժողովուրդէն կտրուած հարաւի լիբանանցիները վերադարձած են հայրենի տուն, ընտանեկան օժախ: 15 տարին երէկ վեր անարդարօրէն բանտախուցեցրու մէջ հիծոնող լիբանանցիներ եկած են յոյս աշխարհ, վերագտած են կեանքը եւ յոյսը: Այսպէս, Լիբանանը եւ լիբանանցիները թշնամիին եւ աշխարհին տունն հաւատքի եւ պայքարի սքանչելի դաս մը:

Հարաւային Լիբանանի ապատագրուած, անտարակոյս, նոր էջ կը բանայ Լիբանանի պատմութեան մէջ. ան մեկնակէտն է Լիբանանի ժողովուրդին ապագային կերտումին եւ խորհրդանշանն է լիբանանեան մեծ ընտանիքը բաղկացնող համայնքներուն միջեւ համակեցութեան, համերաշխութեան եւ գործակցութեան: Բայց, մանաւանդ, ան կը ներկայանայ իբրեւ քաղաքական եւ ընկերային այն ասպարէզը, ուր իր վերակառուցող եւ սոցալտրոքող դերը պիտի ստանձնէ օրինական պետութիւնը եւ անոր հաստատութիւններն ու կառոյցները: Այս յոյսը կը ներշնչէ նաեւ Հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լահուտի վճռական խօսքերը՝ ապատագրուած գիւղերն ու ամառները կատարած այցելութեան ընթացքին: Լիբանանեան ուրոյն քաղաքական դիմագծի կարօտ՝ հարաւի ժողովուրդը մեծ ոգեւորութեամբ եւ խանդավառութեամբ ընդունեց Հանրապետութեան նախագահին յանձնառու խօսքը բոլոր լիբանանցիներու հաւասար իրաւունքներուն, արդարութեան, օրինական պետութեան եւ աշխատանքի ու բարգաւաճումի մասին: Զօր. Էմիլ Լահուտ նաեւ ինչպէս «Դիմադրութեան եւ ապատագրութեան տունը», եւ Մայիս 25ին Լիբանանը պաշտօնապէս գտաւ իր հողային եւ ժողովրդային անբողջականութիւնը:

Այս փայլուն յաղթանակը իրականացաւ շնորհիւ լիբանանեան ժողովուրդին եւ պետութեան անուր եւ գիտակից կեցումներին, Սուրիոյ պօրակցութեան բայց, մանաւանդ՝ դիմադրութեան արձանագրած մեծ յաջողութիւններուն: Արդարեւ, լիբանանեան դիմադրութեան պատմութիւնը եղաւ օրինակելի արտայայտութիւնը թէ կերիլայական պատերազմին եւ թէ գաղափարին ուժին:

Առ երեւոյթ, Իսրայելի հարաւային Լիբանանին իր ուժերը քաշեց իր ապատ կամքով եւ բաւ իր քաղաքական հաշիւներուն: Բայց, ճշմարիտ է, որ իսրայելեան բանակը հակառակ իր համեմատական հսկայ հպօրութեան, հակառակ արդիական օդուժին, իր սայլներուն եւ իր տանիքին, ինչպէս նաեւ դիմադրութեան շարժումները լրտեսել փորձող արբանեակներէն իր ստացած տեղեկութիւններուն Լիբանանի մէջ կրեց ծանր պարտութիւն մը եւ նահանջեց ոչ թէ ինքնակամ, այլ՝ պարտաւորուած:

Ճշմարիտ է նաեւ, որ հակառակ իր շարունակական եւ անխնայ ուժերով շարունակեց, հակառակ Լիբանանի երկիրը ամէն օր բռնաբարող, անմեղ լիբանանցիներ շարողող եւ երկրի ենթակառուցող քանդող իր օդային յարձակումներուն, հակառակ հայրենիքին դաւաճող վարձկաններուն, Իսրայել շրջապատեց ընկճել լիբանանցիներուն, ընդհակառակը, որքան բիրտ եղաւ թշնամիին այնքան աւելի ամրացաւ դիմադրութիւնը, ինչպէս նաեւ ժողովուրդին հաւատքը իր դատին արդարութեան եւ իր անխուսափելի յաղթանակին մասին:

Եւ վերջապէս ճշմարիտ է, որ դիմադրութեան յաջողութիւնը եղաւ նաեւ արդիւնքը լիբանանեան հայրենիքին նկատմամբ լիբանանեան բոլոր խմբաւորումներուն հաւատքին եւ հաւատարմութեան: Լիբանանի քաղաքացիական պատերազմին արտաքին ետք իր մասնա գտաւ հարաւի դիմադրութիւնը, իսկ լիբանանեան բանակի վերամիացումով եւ վերաշխուժացումով կազմուեցաւ այն թիկունքը, որուն յենելով ապատագրական պայքարը ստացաւ նոր թափ եւ արդիւնաւետ ուղղութիւն: Դիմադրութեան եւ պետութեան այս համադրուած գործունէութիւնը իր արտայայտութիւնը գտաւ մանաւանդ քաղաքական արտաքին եւ ներքին ճակատներուն վրայ, երբ իրար լրացուցին զէնքը եւ դիւանագիտութիւնը:

Այսօր, արժանի յարգանքը ներկայացնելով դիմադրութեան եւ ապատագրութեան պայքարին պէտք է շեշտել, որ Լիբանանի դատին ուժը կը կայանայ ներքին համերաշխութեան, հանդուրժողութեան այլպէս խմբաւորումներու եւ համայնքներու համակեցութեան եւ օրինական պետութեան գործունէութեան մէջ. այս Լիբանանին է, որ լիբանանցիներուն կը ներշնչէ ապագայի յոյս, կառուցելու տրամադրութիւնն ու պայքարելու եւ յաղթանակելու կամք:

Մայիս 25ի դիմադրութեան եւ ապատագրութեան օրը նաեւ տօնն է լիբանանեան ինքնութեան եւ հիմքն է հաւաքական ապագային:

ԼԻԲԱՆԱՆ ՆՕՇՅ «ԳԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶՏԱԳՐՈՒՄԻ ՏՕՆ»Ը

ՊԱՐԱՔ ԿԸ ԽՕՍԻ ՄԱԶԱՐԷՇ ԶԸՊԱԱՅԻ ՄԵԿ ՄԱՍԷՆ ՇԵՌԱԿԱՆՈՒ ՄԱՍԻՆ, ԻՍԿ ԼԱՐՍԸՆ ԼԻԲԱՆԱՆՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՇԵՏ ԻՐ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՆԿԱՏԷ ԲԱԶԱԼԵՐԱԿԱՆ



Շրպաս գիւղի բնակիչները կ'արտայայտեն իրենց ցնծութիւնը, լսելէ ետք Մազարէշ Շրպայէն հեռանալու Իսրայելի տրամադրութիւնը:

Լիբանան երէկ տօնեց «Գիմադրութեան եւ Ապատագրումի տօնը»: Այս առիթով, հայրենի դրօշներով ու հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ

Լահուտի դիմանկարներով պարզարուեցան լիբանանեան գրեթէ բոլոր շրջաններու փողոցներն ու հրապարակները:

Հանդիսութիւններ կատարուեցան նաեւ քանակի հրամանատարութեան Եսրայելի կեդրոնատեղիին եւ տարբեր պարամասերու իր ամառատարու իրանց կեդրոնատեղիներուն մէջ: Հանդիսութեանը ընթացքին կատարուեցաւ ընթերցումը քանակի հրամանատար Վոր. Միշէլ Սլէյմանի «օրուն հրահանգ»ին:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէն եւ Հայկական Երեսփոխանական Պրօքթրէկ գումարեցին արտակարգ ժողով մը: Ներկայ էին գրօսաշրջութեան եւ կենսոլորտի նախարար Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԸՆԱԿԱՆ ՊՐՈՔՏ

Շար. Էջ 10

ԻՍՐԱՅԷԼԻ ՅԵՏ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԶԱՄԱԶՅՆԱԳԻՐ ՊԻՏԻ ԶՍՏՈՐԱԳՐՈՒԻ, ԵԹԷ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԵՒ ԱՐԱԲ ԲԱՆՏԱՐԿԵԱՆՆԵՐԸ ԱԶԱՏ ԶԱՐԶԱԿՈՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՆԵՅ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԲԱՐՉՈՐԱՍՏԻՆԱՆ ՊԱՇՏՈՆԱՍԻՐ ՄԻՒ

ԵՐՈՒՍԱԼԷՄ, 25 (ՌՈՅԹԸՐԶ) - Պաղեստինցի բարձրագոյն օրհնակալ պաշտօնատար մի շինգարթի օր ըսաւ, որ Իսրայելի Տետ յաղաղութեան համաձայնագրի պիտի շտորագրուի, եթէ հրեական պետութիւնը մերժէ ազատ արձակել պաղեստինցիները: Դա արձագանք է արտաքին գործերի նախարարի խոսքին: Հաստատուեցաւ, որ պէտք է ազատ արձակուին պաղեստինեան դատի պաշտպանութեան համար իրանտարկուած բոլոր պաղեստինցիներն ու բոլոր անոնք, որոնք նոյն պատճառով ձերբակալուած են:

Աւելի քան երկու շաբաթի վեր, կազմին եւ Այսրօր-պրոքթրանտի պաղեստինցի ինակիցներու օրհնակալութեան ձեռնարկած են պահանջներով ազատ արձակուած Իսրայելի մէջ բանտարկուած պաղեստինցիներուն: Մտաւորապէս 1850 պաղեստինցիներ տակաւին բանտարկուած են Իսրայելի մէջ: Անոնց ինչպէս ազատ արձակուած ցոյցերը անցնելու շարքով բաժնուած էին արիւնայի

նական ընդհանուր քարտուղարի յատուկ պատուիրակ Թերի Ռոտ Լարսըն երէկ կէտանում Եսրայելի շտաբի արգելափակումն անցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հետ, իսկ երեկոյեան ժողով մը գումարեց հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լահուտի եւ վարչապետ Սէլիմ Հըսի հետ:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐ

Հ. Յ. Դ. Բիրոն հետեւեալ շնորհաւորագիրը յղած է Լիբանանի Հանրապետութեան նախագահին. խորհրդարանի նախագահին եւ վարչապետին. Իսրայելեան բանակի հարաւային Լիբանանէն հեռացման առիթով, կը շնորհաւորեց Լիբանանի քաղաքական ղեկավարութիւնն ու լիբանանցի ժողովուրդը: Լիբանանեան հողերու ազատագրումը կը նկատենք լիբանանցի ժողովուրդի դիմադրութեան եւ պահանջատիրութեան պայքարի արդիւնքը:

Իբրեւ հալ ժողովուրդի քաղաքական մէկ հատուածը եւ հալ ազատագրական շարժման մէջ հիմնական ղեկավարութիւնն ունեցած կուսակցութիւն՝ մենք եաղէս կ'ապրինք այն տառապանքը, որ տանեակ տարիներ ապրեցաւ ընդհանրապէս լիբանանցի ժողովուրդն ու յատկապէս անոր հարաւորակ հատուածը եւ հիմնովին կ'արժեւորենք լիբանանեան հողերու ազատագրումը: Ազատագրում, որ կերտուած է բազմաթիւ նահատակներու արեան գնով:

Կը շնորհաւորեմք ազատագրեալ Լիբանանն ու լիբանանցի ժողովուրդը:

Հ. Յ. Դ. ԲԻՐՈ

25 Մայիս 2000
Երեւան

ՅԱՐԳԱՆՔ ԶՕՐ. ԴՐՈՅԻ ԱԾԻՆԻՆ



Զօրավար Իրաւասման Կանայեանի անկիւղ, որ 24 Մայիսին Պոսթրէկէ Երեւան փոխադրուեցաւ, երէկ գեներալեցաւ Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ. ուր իրենց յարգանքի տուրքը մատուցելու համար կ'այցելել նախորդները: Այցելութիւնը կը շարունակուի մաքաւ այսօր:

ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ԵՐՈՈՍՏԱՆՆԵԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԻՆ



Երոտալանտեան Գործակցութեան Խորհուրդի անդամ արտաքին գործոց նախարարները, որոնց շարքին՝ Նախարար Օսկանեան:

ԵՐԵՒԱՆ, 25 (ԱՐՄԷՔՓՐԷՄ) - Երոտալանտեան Գործակցութեան Խորհուրդի (ԵԱԳԽ) անդամ երկիրներու արտաքին գործոց նախարարներու ժողովուրդի ունեցած 25 Մայիսին, Ֆրորանս քաղաքին մէջ: Շար. Էջ 10

ԱՅՍՄ Jeep ԿԱՃԱՍԱՆԻՇՈՎ ԵՇԵՆԱՆԻՆԵՐ

30 \$ ԱՄՍԱԿԱՆ

- 1 տարուան երաշխաւորում
- 4 ձմարան դիւրութիւններ
- Առանց տոկոսի
- Բոլոր տարիներու յարմար

MERCANTILE TRADING CO.
TEL : (01) 653082 - 739852

ՄԻԱԶՄԳՈՒՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԻՍԿՐ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻՆ ԴԻՄԱՅ

ՍՈՒՐԻԱՅԻ ՅՈՒՑԱՐԱՐՆԵՐ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ ԱԶԱՏ ԱՐՉԱԿՈՒՄԸ ԿՈՒԱՆԻ ՄԵՉ ՁԵՐԲԱԿԱՆՈՒԱԾ 17 ՍՈՒՐԻԱՅԻՆԵՐՈՒ

ԳԱՄԱԿԱՆՈՒ, 25 (ՌՈՅԹԸՐԸ).- Աւելի քան հինգ հարիւր սուրիացիներ բողոքի նստացոյցի մը մասնակցեցան Հինգշաբթի օր. Միջազգային Կարմին հաշի կազմակերպութեան Գամասկոսի գրասենեակին դիմաց: Յուցարարները կը բողոքէին Կոլանի մէջ 17 սուրիացիներու ձերբակալման դէմ:

Նստացոյցի աւարտին, ցուցարարներ նամակներ առաքեցին Մ. Կ. Խաչին եւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի՝ պահանջելով անմիջապէս ազատ արձակել ձերբակալուածները: 17 սուրիացիները ձերբակալուած են, որովհետեւ անոնք ենթարկաբար իսրայէլեան ուժերուն դէմ գործունէութիւն տարած են:

Սուրիական խորհրդարանի անդամ Կետիաթ Սալէի, որ անձնապէս 12 տարի բանտարկուած է իսրայէլեան բանտերուն մէջ, ըսաւ, որ Կոլանի մէջ բանտարկուած սուրիացիները մէկ շաբաթէ ի վեր հացադուլի դիմած են բանտային պայմաններու բարելաւում պահանջելու համար:

Շաբ. Էջ 9

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ

Այսօր՝ Ուրբաթ, 26 Մայիս 2000, կէսօրէ ետք ժամը 12:30ի լուրերէն ետք

«Հայաստանեան Չեռարուեստի Ծաբաթ՝ Յուցահանդէս»ի առիթով, ՀԱՐՅԱԶՐՈՅՑ՝

Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան՝ ՊՐՆ. ԱՐՄԱՆ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ եւ Սուրիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան՝ ՊՐՆ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԵՏ:

ԱՅՍՕՐ ՎԱՆԱՅ ՉԱՅՆԷՆ

- Ժամը 11:00ին «ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ԶԱՌԱԿՆԵՐԸ» Կը պատրաստէ եւ կը ներկայացնէ Մարալ Հարպոյեան Կը մասնակցի տոքթ. Այոս Ասատուրեան
- Ժամը 11:30ին «ՅՈՒՇԱՍՍԵՆԱՆ» Նուիրուած՝ Զաւէն Եսայեանի Կը պատրաստէ եւ կը ներկայանէ Սոնիա Քիլեհեան
- Ժամը 16:00ին «ԿԼՈՋԱԿԱՆ» Կը պատրաստէ եւ կը ներկայացնէ Մարալ Հարպոյեան
- Ժամը 18:00ին «ՏԱՂԱՐԱՆ» Կը պատրաստէ եւ կը ներկայացնէ Հեթի Գալիթեան
- Ժամը 19:00ին «ՌԱԶՄԻԿ» Հեռաձայնային մրցում Սագոյիկ Ռեա

al-mashrek
INSURANCE & REINSURANCE S.A.L.

Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.

(01)258228 – (01)268808
Fax: (01) 258223

Հ.Յ.Գ. «Ս. ԹԵՀԼԻՐԵԱՆ» ԿՈՄԻՏԷ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

ՔԱՆԱԽՕՄ՝ ԸՆԿ. ՏԻԳՐԱՆ ՃԻՆՊԱՇԵԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝
«Ս. ԹԵՀԼԻՐԵԱՆ» ԿՈՄԻՏԷԻ
ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ

Տեղի կ'ունենայ այսօր՝ Ուրբաթ, 26 Մայիս 2000, երեկոյեան ժամը 8:00ին, Ազգային Արհեստից վարժարանի շրջափակէն ներս: Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը կը բերեն ՏԻԿԻՆ ՍԱԼԲԻ ԶԷԼԵՇԵԱՆ, ՊՐՆ. ԳԵՈՐԳ ՊԵՊԵՃԵԱՆ, ՊՐՆ. ԸՐԱՉ ԿԱՅՄԱԿԵԱՆ, ՕՐԴ. ՍԱԿԻ ՍԿՐՏԻՉԵԱՆ:

ՍՈՒՏԸ ԱԶԱՏ

ՌՈՒՄԻԱ ԻՐԵՆ ԿԸ ՎԵՐԱՊԱՇԷ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ԴԵՄ ԸԱՐՈՒԱԾՆԵՐՈՒ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆԵՐ

ԿՐԸՄԵ ՌՈՒՄԻԱՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով երկէկ յայտնած է, թէ Մոսկուա Աֆղանիստանի դէմ հարուածներու ձեռնարկելու իրաւունք չի ունենում, որ օր մը առաջ ան Մ. Նահանգներու հաւաստիք տուած էր, թէ նման ծրագիրներ չունի:

«Ինքըրֆաքս» լրատու գործակալութիւնը մէջբերեց Իվանովի, որ Իտալիոյ Ճյորանս քաղաքին մէջ Գործակալութիւնը իրեն յայտնած է, թէ Ռուսիա որեւէ ընտրանք չ'անտեսէ:

«Աֆղանիստանի հողամասերուն վրայ կը պատրաստուին ահաբեկչական եւ այլ արարքներ, որոնք կրնան Ռուսիոյ եւ Կեդրոնական Ասիոյ մէջ անոր գործակիցներուն շահերուն վնասել», ըսած է Իվանով Ռուս թղթակիցներու: Ամբիկացի բարձրաստիճան պաշտօնատար մը

Զորքարթի օր ըսած է, թէ Իվանով երկկողմանի ժողովի մը ընթացքին, վրասահեցուցած է արտաքին գործոց նախարար Մատրիկ Օլպրայթը, թէ նման հարուածներ չեն ծրագրուած:

Կրեմլինի Չեչենիոյ հարցերու բանբեր Սերգէյ Եասթրոմեմպուրի Երկուշաբթի օր ամբաստանած էր Աֆղանիստանի իշխող թախտակալ շարժումը չեչէն ըմբոստներու ապստամտայն յանցանքով եւ գոյուհեցուցած, թէ Ռուսիա կրնայ կանխարգիլման հարուածներու ձեռնարկել:

Իվանով եւ պաշտպանութեան նախարար Իկոր Սերկէե Զորքարթի օր ձայնակցած էին բանբերին սպանախիթներուն, Իվանովի Իտալիա մեկնելէն անմիջապէս առաջ: Ուաշինթոնի ինքնին 1998ին Աֆղանիստանի մէջ

Կեդրոններ ռմբակոծած էր, այն համոզումով, որ անոնք կ'օգտագործուէին իսլամական ծայրայեղական Ռեսամա Պրն Լատրնի կողմէ:

Ուզգեքիստանի նախագահ Իսլամ Գարիմով երկէկ ըսած է, թէ իր կարծիքով, Աֆղանիստանի դէմ հարուածներու ձեռնարկելու Ռուսիոյ սպանախիթները մեծ համեմատութեամբ «պարագ են», եւ աւելի խօսքի պատերազմ մըն են:

Միւս կողմէ, ան թղթակիցներու շեշտած է, թէ Ռուսիոյ հետ իր երկրին պիտու լինուող պարզապէս գործակցութիւնը պիտի կեդրոնանայ օդային պաշտպանութեան եւ պիտակալ հին սարքերու նորոգութեան վրայ: Ան ընդգծած է, թէ Ռուսական ուժեր պիտի չհաստատուին Ռուզգեքիստանի հողերուն վրայ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՓՈՒԹԻՆ ԻՐ ՀԱԿԱԿՇԻՌԸ Կ ԱՄՐԱՊԵՐԷ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԵՕԹԸ ՄԵԾ ԸՐՁԱՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փուտինը երկէկ յայտնեց, թէ երկրին շրջաններուն մէջ իր նոր պատուիրակները խորհրդատու Ապահովութեան Խորհուրդին անդամ պիտի դարձնէ՝ զանոնք իր բարձրաստիճան նախարարներուն մակարդակին բարձրացնելով:

Պատուիրակները, որոնք Մայիս 18ին նշանակուած էին, Փուտինի աջակցութեամբ են ձայնը պիտի պահանջեն Եւրոպայի Կարմնի գոտիներուն մէջ՝ Կրեմլինի իշխանութիւնը հասցնելով կառավարչներուն եւ տեղական վարչակարգներուն:

Պատուիրակներուն նշանակումը Փուտինի կողմէ քաջ մը կը նկատուի՝ կա-

ռավարիչները հակակշռի տակ առնելու: Անոնք նաեւ պիտի գրկուին Դաշնակցային Խորհուրդին մէջ անոնք ռուսներուն իրենց իրաւունքէն:

Այս վերջին քայլը միջոց մը կը նկատուի ազգային քաղաքականութեան վրայ կառավարչներու ազդեցութիւնը նուազեցնելու եւ անոնք ստիպելու, որ տեղական հարցերու վրայ կեդրոնանան:

ԳՈՐԲԱՉՈՎ ՆՈՐ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԿՒՐՁԱՆԱԳՐԷ:

Միւս կողմէ, նախկին խորհրդային նախագահ Միխայիլ Գորբաչով երկէկ իր Ռուսիոյ Ընկերակար ժողովրդավար Կուսակցու-

թիւնը պաշտօնապէս արձանագրեց՝ ըսելով, որ կը պահանջէ գորակից կանցչային ազատական գաղափարներու եւ վերջ տալ ծայրայեղականութեան:

Գորբաչով նշեալ կուսակցութիւնը հիմնած էր անցեալ Դեկտեմբերի խորհրդարանական ընտրութիւններէն առաջ, թէ կ'ուսակցութիւնը չմասնակցեցաւ անոնց: Արդարութեան նախարարութեան կողմէ անոր գրանցումը ապագայ ընտրութիւններու մասնակցելու համար կուսակցութեան համար կը հարթէ:

Գորբաչով երկէկ աւելին ընդհանուր խօսակցութիւն մը ունեցած է Վլադիմիր Փուտինի հետ: (ՌՈՅԹԸՐԸ)

ՌՈՒՄԻԱ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐՈՒ ԵՆԹԱՐԿԵԼ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԶԷՆՔԵՐԸ

Ռուսիա երէկ առաջարկած է կորիւլային պէնքերը մեծ կրճատումներու ենթարկել՝ ապագային կրճուելիք «ՍԹՄԻԹ-3» համաձայնագրին պայմանները յարգելով, ապիկա փոխընտրանք մը նկատուելով Հակամիջցամաքամասային Հրթիռներու համաձայնագրի (Էյ. Պի. Էմ) տկարացումին:

Փընելի մէջ կայացող ՄԱԿի Ապակիման Խորհրդի նախագահ Մոսկուայի պատուիրակը՝ Վասիլի Սիտոնով, ընդգծած է, թէ փոխանակ Էյ. Պի. Էմ. ընդհանուր առմամբ իր համար անբերկեան հրթիռային ապագային պաշտպանութեան մասին:

պաշտպանութեան մասին. երկու մեծ ու- «վահան»ի մը ստեղ- Շաբ. Էջ 9

**ՔՈՒԷՅԹԻ ԵՐԵՄՓՈՒՄԱՆ ՄԸ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԷՆ
ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ՅՐԱՊԱՐԱԿԱԲ
ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼ՝ ԱՐԱՖԱԾԸ
ՀԱՄԲՈՒՐԱԾ ԸԼԼԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ**

ՔՈՒԷՅԹ, 25 (ՌՈՅԹԸՐԸ) - Քուէյթի խորհրդարանի անդամներէն մէկը կը արտաքին գործոց նախարարէն պահանջեց հրապարակաւ ներողութիւն խնդրել իր աններելի ուղեգրագրական սխալին համար: Ան աւելցուց, որ Արաֆաթը բարեկեցիկ ու գայն համբուրելով՝ շէյխ Սապահ անարգած ու վիրաւորած է քուէյթցիները, որոնք կը քննադատեն չպղտնային ղեկավարը ի նպաստ իրաքի կեցուածք որոյցրած ըլլալուն համար 1990ին, երբ իրաքեան բանակը Քուէյթ ներխուժեց:

Աւելի ուշ արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը յայտնած էր, որ ողջագուրումը փրոթոքային արարք մըն էր եւ որեւէ նշանակութիւն չունի Քուէյթ-պղտնային պայքարը կապուած ընթացքին վրայ:

Շէյխ Սապահ եւ Արաֆաթ հրապարակաւ զիրար բարեկամ ու համբուրող ենք իր Սանայի մէջ, Եմէնի վերամիացման տասնամեակի պաշտօնական հանդիսութեան ընթացքին:

ԶԱՆՈՒԱԿ ԳՈՒՆԱԳՐԵԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆԻ

ԹՐՔԱԿԱՆ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԻՐԱՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

ԱՆԳԱՐԱ, 25 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիա Հինգշաբթի օր յայտնեց, թէ այս շաբաթ Իրան պիտի ղրկէ անուտրական պատուիրակութիւն մը, հակառակ նախատեսուող դիւանագիտական բանավեճի մը՝ Թուրքիոյ մէջ իսլամական ըմբոստներու հետ իրանեան ենթադրեալ կապերու գծով:

Թուրքիոյ արտաքին առևտուրի գրասենեակը յայտնեց, թէ 140 գործարարներէ բաղկացած պատուիրակութիւն մը Իրան պիտի այցելէ Մայիս 27ին Յունիս 1:

Երկու կողմի երկրներուն միջեւ դիւանագիտական մեծ երթեկէ կ'արձանագրուած է այս շաբաթ, մասին այն տեղեկութիւններէն ետք, թէ Իրան պարտաւիճ կը կանգնի իսլամական ըմբոստներու վրայ Թուրքիա պատասխանատու կը նկատէ 1990ական թուականներուն տեղի ունեցած քաղաքական բնոյթի շարք մը սպանութիւններու:

Թուրք ղեկավարներ յայտնած են, թէ բաւարար փաստեր չկան Իրանը մեղաւորութեամբ անբաստանելու համար, սակայն ծանր հետեւանքներէ վզուշացուցած են թէ նման կապերու գոյութիւնը հաստատուի:

Իրան կը հերքէ Անգարայի այս անբաստանութիւնները. թէ կը փորձէ իր յեղափոխութիւնը Թուրքիոյ մէջ տարածել:

Թեհրան այս շաբաթ բողոքած էր Թուրքիոյ Շաբ. Էջ 9

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՉ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ
Ս. ՊԱՏԱՐԱԳ
ԵՒ
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՈԳԵՅԱՆԳԻՍ
ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ**

Կիրակի, 28 Մայիսին, Հայաստանի Անկախութեան (1918) տարեդարձին առիթով, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի պատարագէ՛

**ԳԵՐՇ. Տ. ԶԱՐԵՀ ԱՐԸ.
ԱԶՆԱԽՈՐԵԱՆ**

Ս. պատարագը պիտի սկսի ժամը 9:00ին: Պատարագին հետեւ պիտի գտնուի ճակատկարող Վատիկանի եւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Խառն լուսնախումբի ժողովին մասնակցող անդամները: Պիտի քարոզէ Վատիկանի միջեկեղեցական յարաբերութեան ընդհանուր պատասխանատու

**ԳԵՐՇ. Տ. ՌՈՒԹԸՐ
ԿԱՐՏԻՆԱԼ ԳԱՍՊԸՐ**

Յընթացք Ս. պատարագին հոգեհանգստեան յատուկ պաշտօնի պիտի կատարուի ի ինդիլի Հայաստանի անկախութեան եւ յատկապէս Սարգսյանի անկախութեան ճակատկարող հոգեհանգստեան համար: Հոգեհանգստեան արարողութեան պիտի նախագահէ Ս. Աթոռոյս վեհափառ հայրապետ՝

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարագին եւ իր արժանավայել յարգանքը ընծայելու քաջամարտիկ հերոսներուն:

Մայիս 28ը նաեւ անուանակոչութեան տօնն է վեհափառ հայրապետին: Պատարագէն ետք Արամ Ա. կարողիկոս շնորհաւորութիւններ պիտի ընդունուի վեհափառի դահլիճին մէջ:

ԻՒՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆ

ՀՈՎԱՆԱԽՈՐՈՒԹԵԱՄԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ԸՄՅՈՑ ԹԵՄԻ)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝
**Շ.Ս.Ը.Ս.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐՁԱՆԱՅԻՆ
ԿԱՐՉՈՒԹԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Կիրակի, 28 Մայիս 2000, երեկոյեան ժամը 6:00ն սկեալ, Պուրճ Համուտի Զաղաքապետարանի հրապարակին վրայ:

●Տոգանցքն էտք տեղի պիտի ունենայ երգերու փառատօն, մասնակցութեամբ՝ ԱՐԱՐԱՏ ԱՇԱՐՈՆԵԱՆԻ, ԸՐԱՉ ԿԱՅՄԱԿԵԱՆԻ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԳՐԱՃԵԱՆԻ, ընկերակցութեամբ ՃԱՆԹ ՏԻՇՉԵՆԵԱՆԻ ՆՈՒԱԿԱՆՈՒՄԲԻՆ

ՊԱՐԱՔ ԿԸ ԽՕՍԻ ՄԱՋԱՐԷՆ ԶԵՊԱԱՅԻ ՄԵԿ ՄԱՍԵՆ ՇԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ,...

Մտերիոյ եւ Հրպայալա- յի, շարունակելու Բարայե- ի ղեմ զինուորական գոր- ծողութիւնները:

Չայնասփիւրը նաեւ հաղորդած էր, որ Բարայե- յեան բանակը պարպած ու ականահարած է Մազա- րէի Շրպայալի իր մէկ դիր- քը, եւ կը ծրագրէ հեռանալ նաեւ մէկ կամ երկու այլ դիրքերէ:

Բարայեյի պաշտպանու- թեան նախարարութիւնը ըստ, որ այս տեղեկու- թիւնները անհիմն են:

Պարաքի գրասենեակը իր կարգին յայտարարեց, որ Բարայեյ տրամադիր չէ հրաժարելու Մազարէի Շրպայալի այն բաժիննե- րէն, որոնք ՄԱԿի քարտէս- ներուն հիմամբ Լիբանա- նի շէն պատկանիր:

Գրասենեակը նաեւ ըստ, որ Պարաք Շիրաքի ըսած է, թէ Բարայեյեան բանակը պիտի պարպէ այն շրջանի մէկ փոքր մասը, որ նոյն քարտէսներուն հի-

մամբ Լիբանանի սահման- ներէն ներս կ'իջնայ: Այս ծիրէն ներս է, որ Բարայե- յեան բանակը պարպած է Մազարէի Շրպայալի իր մէկ դիրքը, աւելցուց հաղորդագրութիւնը:

ՄՈՎԱԶ

Բարայեյեան սպայակո- յի պետ Շարու Մովազ ըստ, որ Բարայեյ պատ- րաստ է Մազարէի Շր- պայալի մէջ սահմաններու վերանայումին, այս գծով քաղաքական երկխօսու- թիւն կ'ունենայ ՄԱԿի հետ, եւ քանի մը օրէն կրնայ վճռուիլ այս հարցը: Յա- նաշիկայ քանի մը օրե- րուն, ՄԱԿի եւ Բարայեյեան բանակի մասնագետները միասնաբար պիտի ստու- գեն յիբանանի Բարայեյ- եան սահմանագիծը:

Մովազ նաեւ ըստ, որ իր բանակը պիտի վերա- դաստորէ Լիբանանի հետ սահմանին վրայ իր դիր- քերը, եթէ նման կարգադ-

րութեան կարիք ըլլալ:

Ան նաեւ կրկնեց այն սպաննալիքը, թէ ոչ ոքի կը յանձնարարէ հապճեպ եւ սխալ եզրակացութիւններ հանել Բարայեյեան բանա- կի կարողութեան մասին Լիբանանէն անոր հեռա- ցումին յոյսին տակ:

Քաղաքական Սեյիմ Հըս- երէկ շրջապտոյտ մը կա- տարեց ապաստարան շրջ- շաններուն մէջ՝ ամէնու- ղեք արժանանալով ծո- ղով զոհարարի խանգաւան ու շերմ ընդունելութեան: Ան այցելեց Պէյրէտի Բուր- յին, Պընթըմայէյի, Այրա- րուն, Մէյն Էլ Շապալ Հու- յա, Քիշյաա եւ Մերձա- յուն գիւղաքաղաքներն ու Խիսիի արգելաբանը:

Հոն կատարած իր յայ- տարարութիւններուն մէջ, Հըս ցաւ յայտնեց շրջանին կրած քանդումին ու աւե- րին համար՝ հաւաստելով, որ պետութիւնը բոլոր պայ- մաններուն մէջ պիտի մնայ իր քաղաքացինե- րուն կողքին:

Քիշյաա մէջ, Հըս բնակչութեան ըստ. «Ամ- բողջ Լիբանանը ձեզի պարզ կանխէ, որովհետեւ ձեռք անկուն կեցուածքը ապահովեց ապատրեան այս վերանորոգ արշալոյ- սը: Ուրախ եմ որ պատաս- իանատու պաշտօնի վրայ կը գտնուի 22 տարուան բնագրաւով ետք հայ- րենիքի ապաստարան մը պահուն: Մենք պատրաստ ենք շրջանը բնականոն կեանքի վերադարձնելու եւ վերահաստատելու կա- յունութիւնը»:

Խիսիի արգելաբանին մէջ Հըս ըստ, որ անկա- րագրելի է իր վզացումը հերոսներու կրած տան- ջաքներուն ականատեւ այս վայրերուն մէջ, եւ ոչ- շոյնի խօսք ուղղեց բոլոր իբանացիներուն՝ հաս- տատելով, որ ասիկա փա- ռաւոր օր մըն է, վոր բոլոր իբանացիները կը տօ- նեն:

Հերոս դիմագրութեան ու ժողովրդի անկուն կեց- ւածքին շնորհիւ իրա-

քացայ պարտուած հեռա- ցումը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻ ԶԱՖԱԹԷԻ ԴԻՐԲԻՆ ՄԵՋ

Յրանսական յրատու գործակալութիւնը երէկ հաղորդեց, որ իբանա- նեան բանակը ապաստար- ան շրջաններէն ներս քաղաքացիները իր մէկ շուկա- յի հաստատած է Բարայե- յի պարպած Չաֆաթի դիրքին մէջ:

«Ա. Է. Փէ.» աւելցուց, որ Լիբանանի ներքին ապահովութեան ուժերու յաւելեալ շուկաներ առաքում են Բարայեյի յղած Ռմէյէ, Այն Էպլի եւ Այմա Շապալ գիւղերը:

Լրատու գործակալու- թիւնը, իբանանեան բա- նակի սպայի մը վերագրե- լով իր տեղեկութիւնները, հաղորդեց, որ իբանա- նեան բանակը յաւելեալ ու- ժեր պետեղած է ապա- տարանած շրջաններու իր անցարգելներուն վրայ, ուր ձերբակալուած են այդ շրջաններէն իրեր գողցած կամ գողցուած իրեր փո- խադրող բաւմասթի անձեր:

Լրատու աղբիւրները հաղորդեցին, որ Քիշյաա-

յի բնակիչները վարչա- պետ Հըսի բողոք ներկա- յացուցած են գողութիւն- ներու եւ այլ օրինազան- ցութիւններու մասին: Անոնց մէկ պատուիրակու- թիւնը նոյն գաւառի ներ- կայացնելու համար դիմած է տեղեկատուութեան նա- խարար Անուար Խալիլի, որ անոնց վստահեցուց, թէ կատարարութիւնը որդե- գրած է բոլոր անհրաժեշտ միջոցառումները: Խալիլ նաեւ հեռաձայնեց վարչա- պետ Հըսի, որ իրեն յայտ- նեց, թէ ներքին ապահո- վութեան ուժերու ընդհա- նուր տնօրէն Վոր. Ապտէլ- Քարիմ Բարահիմ շրջանին մէջ գտնուող իր ուժերուն տուած է այս գծով իրատ- ցուցումներ, հաղորդե- ցին նոյն աղբիւրները:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարու նակուած Ա. Է. Լ. Գ.

Արթիւր Նապարեան, երեսփոխաններ Անտրէ Թապուր- եան, Յակոբ Չուրխատարեան եւ Արախաճ Տեղեւեան: Ժողովը քննարկեց հարաւի եւ արեւմտեան Պէքալայի գիւղերէն ու գիւղաքաղաքներէն Բարայեյեան հեռացու- մէն ետք տիրող մթնոլորտը:

Ժողովէն ետք հրապարակուեցաւ հետեւեալ հաղոր- դագրութիւնը.

«Հայկական Երեսփոխանական Պիտրոս ու Հ. Յ. Գաշ- նակցութեան Կեդրոնական Կոմիտէն կը շնորհատրեն Լի- քանանի նախագահը, ժողովուրդին ու կառավարութիւնը Բարայեյի կողմէ հարաւի եւ արեւմտեան Պէքալայի հողե- րու բռնագրաւումին վերջ գտնելուն առիթով: Անոնք կը հաստատեն, որ պատմական այս իրագործումը արդիւնքն է հարաւի մէջ թշնամի Բարայեյի ղեմ ազգային դիմադրու- թեան մղած անընդհատ պայքարին եւ հերոսական գոր- ծողութիւններուն:

«Անիկա նաեւ անխուսափելի արդիւնքն էր հանրապե- տութեան նախագահ Վոր. Էմիլ Լախուտի գլխաւորութեամբ Լիբանանի պետութեան վճռական կեցուածքներուն, որոնք կը մերժէին սակարկութեան նիւթ դարձնել Լիբա- նանի իրաւունքները կամ պիշիլ հայրենի հողին որեւէ մասը: Ժողովը կ'ողջունէ հարաւի հարապատներուն անն- կուն կեցուածքը, որ փաստեց, թէ պէնքն է հողի ապատա- գրում եւ խաղաղութեան պայմաններ պարտադրելու միակ ուղին»:

Ժողովը նաեւ որոշեց, որ իբանանահայ երեք համայնք- ներու կրօնական առաջնորդներէն, Հայկական Երեսփո- խանական Պիտրոս ու Հ. Յ. Գաշնակցութեան Կեդրոնա- կան Կոմիտէի անդամներէն բաղկացած պատուիրակու- թիւն մը վաղը (այսօր) այցելէ ապաստարանած շրջաննե- րը՝ արտայայտելու համար հայ համայնքի վաւակներուն պօրակցութիւնը իրենց իբանացի եղբայրներուն եւ մաս- նակցելու լաղթանակին եւ հայրենի հողին բռնագրաւու- մին վերջ գտնելուն առիթով անոնց ներախուրտեան:

25.5.2000
Պէյրութ

ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ ...

Շարու նակուած Ա. Է. Լ. Գ.

Հանդիպումին կը մասնակցէր նաեւ Հայաստանի ար- տաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, որ իր խօսքին մէջ անորադարձաւ շրջանային անվտանգու- թեան: Նախարար Օսկանեան նշեց, որ ՕԹԱՆԻ հետ գոր- ծակցութեան հաստատման համար Հայաստանի ռազմա- վարութիւնը կը հիմնուի Հայաստանի արտաքին քաղա- քականութեան իրար ամբողջացման սկզբունքին վրայ: Ան նշեց, որ կովկասի մէջ, ուր կը բախին տնտեսական եւ առեւտրական շահեր, եւ հետեւաբար կայուն խաղաղու- թեան եւ անվտանգութեան հաստատման համար պէտք է վարել հաւասարակշռուած քաղաքականութիւն: Այս առու- մով, նախարար Օսկանեան կարեւոր նկատեց կովկասի անվտանգութեան դաշնագիրը, որ պիտի ներգրաւէ ոչ միայն կովկասի երեք պետութիւնները, այլեւ շրջանի զրաքի երկիրները եւ շրջանին մէջ անմիջական շահեր ունեցող ուժերը:

Ժողովին շրջագծին մէջ, նախարար Օսկանեան հան- դիպումներ ունեցաւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի եւ Աւստրիոյ արտաքին գործոց նա- խարար ԵԱՀԿի նախագահ Պենիթա Ֆերէնո Ռոյտների հետ, որ 15էն 17 Յուլիին Հայաստան պիտի այցելէ:

Նախարար Օսկանեան նաեւ հանդիպում ունեցաւ Մինսքի իմբակի ամերիկացի համաձայնագրի Քերի Քա- անոյի եւ ԱՊՀ երկիրներու հարցերու Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարի խորհրդական դեսպան Սթիվըն Սեքսթանովիչի հետ: Հանդիպումին քննարկուե- ցան Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման եւ շրջա- նային անվտանգութեան վերաբերող հարցեր:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 4570

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

- ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ**
1. Կուլակ - Կաթնտու- անատուն:
 2. Ասիական ծով - Վալ- յի սայոր:
 3. Պատնէջ - Անասունի կուղ:
 4. Հայնահայտ - Թէկո- ղիկի ստորագրութիւննե- րէն:
 5. Այրուրենէն - Ափրիկ- եան երկիր:
 6. Մէկ կողմ - Գեղեցիկ արքայ:
 7. Կրկնուած բաղաձայն- ներ - Որովհետեւ - Կարծր ու թափանցիկ նիւթ (Տակ.):
 8. Բնական նախասիրու- թիւն - Իսլամ կրօնաւոր:
 9. Սարսափ - Հեղուկ դառնայ:
 10. Կոնցրիցաւոր համե- մարոյս - Թողութիւն:
 11. Վարս - Սիրելի, հաճե- լի գտնել:
- ՈՒՂԱՆԱՅԵԱՑ**
1. Կուրդին - Ժուռ:
 2. Թատերական հան- գրութեան - Մտատանջ:
 3. Ժիտի՛ - Տառի մը ա- նունք:
 4. Գարրիկ Սուեդուկ- եանի թատերգութիւննե- րէն (երեք բառ):
 5. Այրուրենէն - Ատեան:
 6. Ստացական ածական- Պատեղուր - Կրկնական իշ- խան:
 7. Դարիճենիկ - Ծին Տէյնի գլխուտրական թելը:
 8. Ոչ ա մոլորջական- Ծաղկայ:
 9. Աչքի կափարիչ - Այլ զաւառի աւաններէն:
 10. Ելեկտրական միա- լոր - Յետոյ - Չայնանիչ:
 11. Չեռայ - Մթնոլոր- տային գոլորշի:

ԹԻՒ 4569

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ MASTER MALL

ԳՆՈՒՄԻ ԼԱԲԱԳՈՅՆ ՇԱՍՅԵՆ

3.100 L.L.

6.900 L.L.

4.375 L.L.

1.865 L.L.

2.090 L.L.

MASTER MALL
supermarket

4.400 L.L.

ԸՇՑԹԵ ՊԵԼԵՏԻ 1 ԹԻԼՕ

5.000 L.L.

ԹԱԱՆԱՅԵԼԻ ԼԵՊՆԻ 1 ԹԻԼՕ

2.900 L.L.

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՊԱՆԻՐ 200 ԿՐԱՍ

1.050 L.L.

3.020 L.L.

1.000 L.L.